Եւ ասէ արքեպիսկոպոսն ’ի վերայ ընտրելոյն՝ զաղօթս.

«Տէր ամենակարող ամենայնի, որ զծառայս քո (Ա. Ա.) պատշաճեցուցեր գալ ’ի պատիւ թագաւորութեան, տուր նմա ըստ կամաց քոց կարգել զժողովուրդս՝ որ ընդ ձեռամբ իւրով, այսու պատուով պահպանել եւ փրկել, զի մի՛ հեռասցին ’ի ճանապարհէն արդարութեան. շնորհօք Միածնի քո՝ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ որում քեզ Հօր եւ Հոգւոյդ Սրբոյ՝ վայելէ փառք»։

Յետ այսր առնուն զնա երկուք ’ի զգեստեալ եպիսկոպոսացն, որ մասունս ’ի նշխարաց Սրբոց ունիցին ’ի պարանոցսն իւրեանց. եւ երկու խաչս եւ աւետարանս եւ բուրվառք եւ լապտերս. եւ կղերիկոսքն զգեստեալք. եւ այսպէս զնան եւ երգեն վերաձայն. «Ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո, որ հանդերձեսցէ զճանապարհս քո առաջի քո»։ Եւ սաղմոսեն «Ցնծացէք առ Աստուած, օգնական է մեր». եւ զան մինչեւ ’ի դուռն տաճարին, եւ առնեն զնա դպիր։ Եւ արքեպիսկոպոսն ասէ զաղօթս զայս.

«Տէր Աստուած, որ ճանաչես զազգս եւ զցեղս մարդկան, զի ոչ կարեն ինքեամբք մնալ, բայց թէ օգնականութեամբ. վասն որոյ աղաչեմք զքեզ, խոնարհեա ’ի մեզ, եւ զծառայս քո (Ա. Ա.) զոր ընտրեաց ժողովուրդս՝ կալ առաջի իւրեանց, հաստատեա քո օգնականութեամբդ. զի կարող լիցի առաջնորդել նոցա ճշմարտութեամբ. շնորհօք Տեառնդ մերոյ Յիսուսի Քրիստոսի». եւ այլն։

Եւ մտեալ ’ի տաճարն սուրբ՝ եւ երգեն ձայնիւ սաղմոս. «Լուիցէ քեզ Տէր յաւուր անձկութեան», ’ի լման. եւ ’ի մէջ եկեղեցւոյն դադարեն։ Եւ կաթողիկոսն տայ երդնուլ ընտրելոյն ’ի վերայ *Սովորական իրաւանցն*[87]. եւ զկնի ասէ զաղօթս զայս.

«Աստուած ամենակարող, յաւիտենական, տէր երկնի եւ երկրի, որ զծառայս քո (Ա. Ա.) բարձրացուցեր ’ի պատիւ թագաւորութեան, աղաչեմք զքեզ վասն սորա, փրկեա զսա յամենայն նեղութենէ, զի լիցի հաստատիչ խաղաղութեան սուրբ եկեղեցւոյ, եւ զօրասցի շնորհօք քո՝ հասանել ’ի յաւիտենական խաղաղութեանդ ուրախութիւն. շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում». եւ այլն։

---

87 Այս ինքն ազգային իրաւունք եւ օրէնք. որ ըստ այնմ ժամանակի՝ էին Ասսիզքն (Assises) Երուսաղեմի, ըստ որոց յետ սակաւուց յարմարեցան Անտիոքայն, որով վարէին եւ արքունիք Հայոց, մինչ չեւ իսկ Սմբատայ գունդստապլի թարգմանեալ զայն ’ի փռանկ լեզուէ, որպէս եւ ինքն իսկ ծանուցանէ։ Այլ զի եւ հին հայկական օրէնք չէին խափանեալք, յայն սակս նոյն նախանձախնդիր սպարապետ՝ եյեղ ’ի գաւառական լեզու՝ զԴատաստանագիրս Մխիթարայ Գոշի, յարմարելով պիտոյից եւ սովորութեանց իւրոյ երկրին։